ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
15 Հունվարի, 2025թ.

Ճշմարտության և արդարադատության կենտրոնը պահանջում է Ադրբեջանից թույլ տալ միջազգային իրավաբաններին հետևել հայ բանտարկյալների դատավարություններին

Լոս Անջելես, ԱՄՆ - Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (CFTJ) պահանջում է Ադրբեջանի կառավարությունից թույլ տալ մի շարք նշանավոր միջազգային իրավաբանների այցելել Բաքու՝ մասնակցելու և հետևելու հայ բանտարկյալների առաջիկա դատավարություններին, որոնք նախատեսված են սկսվել 2025 թվականի հունվարի 17-ից:

«Այս բանտարկյալներն ապօրինի են պահվում նախնական կալանքի տակ, հորինված մեղադրանքներով՝ առանց հասանելի իրական իրավական ներկայացուցչության: Նրանք գրեթե չեն կարողանում կապվել ընտանիքի անդամների հետ: Միջազգային դատական դիտորդները անհրաժեշտ են, որպեսզի Ադրբեջանի դատական համակարգը պատասխանատու լինի ակնկալվող փակ և գաղտնի դատավարությունների համար»,- ասել է Ճշմարտության և արդարադատության կենտրոնի նախագահ Գոռ Մնացականյանը:

Դատավարությունները վերաբերում են Արցախի ութ ռազմաքաղաքական ղեկավարներին, որտեղ Ադրբեջանն էթնիկ զտում է իրականացրել տասն ամիս տևած շրջափակումից հետո, որին հաջորդել է ռազմական ագրեսիան 2023 թվականի սեպտեմբերին, ինչի արդյունքում 120,000 հայեր բռնի տեղահանվել են Հայաստան:

Ադրբեջանից վիզաների սպասող միջազգային դիտորդների թվում են Անա Մարիա Կարեագան (Instituto Espacio para la Memoria տնօրեն, և Ատլանտիդա համալսարանի Մարդու իրավունքների հետազոտությունների ինստիտուտի տնօրեն), Կլաուդիա Վիվիանա Ռոկան (փաստաբան և Արգենտինայի փաստաբանների ասոցիացիայի նախագահ, Mothers of Plaza de Mayo ազգային համալսարանի և Արգենտինայի Մորենո ազգային համալսարանի պրոֆեսոր), Իրենե Վիկտորիա Մասիմինոն (փաստաբան և մարդու իրավունքների ու միջազգային քրեական իրավունքի փորձագետ, Բուենոս Այրեսի բարձր քրեական դատարանի նախկին զեկուցող, ԱՄՆ-ի իրավունքի պրոֆեսոր), Ավի Սինգղ՝ ավագ փաստաբան և միջազգային քրեական փաստաբան:

CFTJ-ը պահանջում է Ադրբեջանի իշխանություններից անհապաղ միջոցներ ձեռնարկել վիզաները տրամադրելու և ամբողջ այցի ընթացքում նշված դիտորդների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

ԶԼՄ ներկայացուցիչներին խնդրում ենք կապվել հետևյալ հասցեյով

Մելինե Մայիլյան, փաստաբան՝ info@CFTJustice.org

Ճշմարտության և արդարադատության կենտրոնի մասին (CFTJ).CFTJ-ն ԱՄՆ-ում հիմնված շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ բաղկացած փաստաբաններից, իրավապաշտպաններից և մասնագետներից: Նրանց գործունեությունն ուղղված է պատերազմական հանցագործություններից, տեղահանությունից, զանգվածային արյունահեղություններից և ցեղասպանությունից տուժածների ձայների բարձրաձայնմանը: CFTJ-ն ունի պատերազմական հանցագործությունների զոհերից հավաքված ավելի քան 600 վկայություն: